

Նգիպսոսի մեր համազգի Հասարակութիւններէն Հայ Կարողիկները, Գահիրէի Տարպէլ Կենինէ բաղին մէջ ունին եկեղեցի մը, յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի, որ կառուցուած է 1840-ին: — Ներկայ տարւոյն ընթացքին, Կարապետ Պէյ Մաթոսեանի նուիրատուութեամբ՝ ունեցան հայկական ռնով կառուցուած, Աւետում Ս. Աստուածածնի անունով նոր եկեղեցի մը եւս, Գարս էլ Նիլի բաղին մէջ, հարսարպետութեամբ Պ. Կարօ Պալեանի: Ասոնցմէ զատ ունին մասուռ մը եւս Հին Գահիրէի իրենց գերեզմանասան մէջ, նոյնպէս հայկական ռնով, զոր, հնագոյնին տեղը, հանգուցեալ Նագուպ Արդին Փաւայի դուստր Տիկին Կասարինէ Լիմօնեկլիի նուիրատուութեամբ երկու տարի առաջ տիկնեց այս վերջինին ամուսինը հարսարպետ Պ. Լիմօնեկլի: — Աղեքսանդրիոյ մէջ եւս ունին անոնք սեփական եկեղեցի մը Անարաս Յղուրիւն անունով. Բօր էս բաղին մէջ, կառուցուած 1890-ին. նոյնպէս մասուռ մը, Ս. Յարութիւն անունով, Մաթոսեան Յովհաննէս Պէյի նուիրատուութեամբ կառուցուած 1924-ին:

Իսկ Հայ Բողոքականները, որոնք Աւետարանական կ'ընդունին, եւ Ժողովական յարանուանութեան կ'պատկանին, թէեւ թէ՛ Գահիրէի եւ թէ՛ Աղեքսանդրիոյ մէջ ունին յասուկ քարոզիչներ, բայց ոչ առաջին քաղաքին եւ ոչ երկրորդին մէջ տակաւին չ'ունին սեփական ոչ Ժողովարան եւ ոչ գերեզմանավայր. Գահիրէի մէջ անոնք կրօնական պաշտամունք կ'կատարեն Ամերիքէն Միւրնի շէնքին վարի յարկի մէկ տարին մէջ, եւ իրենց ննչեցեալները կ'քաղուին Ղպսիներու գերեզմանատունը: Իսկ Աղեքսանդրիոյ մէջ իրենց պաշտամունքը կ'կատարեն Բողոքական Սկովսացւոց Ժողովարանին մէջ:

